



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

դեկտեմբերի 2017 թվականի N°Ա  
քաղ. Երևան

**«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈՔԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոքեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի «Alstom» GT-13E2 MXL/MCL տիպի գազատուրբինի վերակառուցմանն ուղղված ներդրումային ծրագրին՝ 5,97 մլն եվրո ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
  - 1) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոքեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի «Alstom» GT-13E2 MXL/MCL տիպի գազատուրբինի՝ MXL2 ռեժիմի վերակառուցմանն ուղղված ներդրումային ծրագիրը կազմում է 20,68 մլն եվրո՝ առանց ավելացված արժեքի հարկի, այդ թվում.
    - ա. էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկներով նախատեսված նորոգման ծախսերում կուտակված միջոցներ՝ 11,37 մլն եվրո.
    - բ. վերադարձվող պահեստամասերի արժեքից նվազեցումներ՝ 3,34 մլն եվրո.
    - գ. ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր՝ 5,97 մլն եվրո:

2) Սույն որոշման առաջին կետում նշված ներդրումային ծրագրի իրականացումից հետո ակնկալվող ցուցանիշները, մասնավորապես, գազատուրբին և օժանդակ սարքավորումներ՝ 186,9 ՄՎտ, ՕԳԳ<sub>նետ</sub>-ն՝ 48.6%, C ինսպեկցիաների քանակը՝ 3 հատ, միջակայքը՝ 6 տարին մեկ անգամ, առաջին C ինսպեկցիան 2018 թվականին, կամրագրվեն լիցենզիայի պայմաններում և հաշվի կառնվեն ընկերության հետագա սակագների հաշվարկման ընթացքում.

3) ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելուց հետո, Հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 20-ի №194Ա որոշմամբ հաստատված №0350 լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով, անհրաժեշտ է Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգին համապատասխան դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
դեկտեմբերի 2017թ.